

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սիմէոն դպիր Չամոսցացի, որ եւ Լեհացի, առաջին անգամ հոս հրապարակ կուղայ իբրեւ մատենագիր եւ ուղեգիր: Իւր կենսագրութեան համար բարերախտաբար նա ինքը նախահոգ եղած է աւանդել մեզ տեղեկութիւններ, մասամբ իւր Ուղեգրութեան եւ մասամբ զանազան Յիշատակարաններու մէջ, զորոնք կցած է իւր օրինակութիւններուն (տե՛ս Յաւելուած Թ. 1—10):

ՀԵՂԻՆԱԿԸ

Սիմէոնի ծնողքը՝ մահտեսի Մարտիրոս եւ Դորլաթ խաթուն հայրենեօք Կաֆացի են¹: ԺՁ. դարու երկրորդ կէսին հանդերձ ազգականօք կը գաղթեն Կաֆայէն եւ կու գան կը հաստատուին Լեհաստանի Չամոսցա նորաչէն գիւղաքաղաքը: Տեղափոխութեան ճիշդ թուականը յայտնի չէ. տեղի ունեցած ըլլալու է այն իբր 1580ին:

¹ «Ծնողքն իմ բնական յաշխարհէն Հոնաց ի տիրահնամ եւ աստուածապահ ծովահայեաց քաղաքէն Քաֆայու. պանդուխտ գոլով եկեալ բնակեցան քրիստոնէից երկիրն ի գաւառն Լոզաց, որ այժմ տիրեն Լէհք, ի նորաչէն գիւղաքաղաքն Չամոսցա» (Ուղ. էջ 1):